**ՂԱՍԱԲ-ՕՂԼԻ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Էլել ա, չի էլել մի թրգավոր։ Էդ թրգավորը շատ շեն ա էլել, մեմենձ ըմարաթնի ու շըլիղ շատ երգըրնի ա ունեցել. հըմա էն ա՝ որ խեղճը անորդի ա ըլում։ Ալամ ըշխարքումը ինչ որ գիտուննի ու գրբացնի կան, ինչ որ ջինդար ու փալբացնի կան՝ չիմնու կուշտն էլ մարդ ա ղըրկում, չիմնուն էլ բերիլ ա տալի, որ մի ճար անեն՝ իրան մի զավակ ըլի, հըմա բան չի դառնում։
Էս խաբարը մի շատ իմաստուն Դարվըշի անգաճն ա ընգնում. ինքը, ղորթ ա, շըլիզ ըշխարքի մեկել ծերումն ա ըլում, հըմա չունքի իրանից ումուդ ա ունենում, վեր ա կենըմ ու ճամփա ընգնըմ։ Է՛, գնըմ ա գնըմ, չքել մի տարին տեղ ա հասնըմ։
Թրգավորին իմաց են տալի, թե. «Մի Դարվիշ ա եկել, քու տեսությունն ա ուզում»։
Դարվիշը, հլե որ թրգավորի ըմարաթնին ա մտնում հա, ջըլիզդան շշկլվում ա ու աչքերը մթնըմ են՝ էն զարդ ու զըրդարանքիցն ու ալ ու ալվան պլպլոցիցը։
— Դա՛ըվիշ բաբա, ա՛սա տենում ի՞նչ խընդիրք ունիս,— հարցնում ա թրգավորը։
— Թրգավորն ապրած կենա,— ասըմ ա,— ես իմացել եմ, որ քի որդի չի ըլում, եկել եմ, որ էնթավուր մի գիր անեմ, որ տարին վրա ասծով քի մի ղոչ տղա ըլի։
— Դա՛ըվիշ բաբա,— ասավ,— ըշխարումս էլ գիտուն ու դարվիշ չմնաց, էլ ջինդար ու փալբաց չմնաց, մժա հըվաքեցի, հըմա մինն էլա բան չի բըջարեցին։
— Թրգա՛վորն ապրած կննա,— ասըմ ա,— թող ես գիր անեմ, ըժու թե որ մի տարեն վրա քի որդի չըլի, իմ գլուխը տու։
— Դե՛ լավ, ասավ թրգավորը,— որ ըթենց ա, գիր ա՛րա, ես գլուխ կտրիլը գիդեմ ոչ. թե որ խոսքդ դրուստ դուս եկավ, իմ խազընիցը քաշովդ մին ոսկի կտամ։
Բերեց իրան ճամփու խարջլուղն էլ տվուց։
— Թրգավորն ապրած կենա,— Դարվիշն ասավ,— ես քիանե ոսկի չեմ ուզըմ, հըմա մուննաթ եմ անըմ, որ եփ ըեխեն ըլի հա, թողուս կնքավորը ես ըլիմ։
Թրգավորը միտք արավ, միտք ու թե. «Դե լավ,— ասավ,— թող ըթենց ըլի»։
Դարվիշը գիրն արավ, ոնց որ կարգն էր, ամեն բանի թամբահն ապարավ ու գնաց իր ճամփեն։ Տարին թըմամեց, Դարվըշի խոսքը դրստվեց. թրգավորին մի լավ սիրուն տղա էլավ։ Էլ ի՞նչ ասեմ, էն ուրախությունն արին, որ անասելի, անպատմելի։ Հըմա թրգավորը իր խոստմունքը կըտարեց ոչ. ըեխին կնքիլ տվուց. «Ո՞վ գիդի,— ասավ,— հմի Դարվիշը մեռած ա, թե սաղ»։
Ըժու թամբահ արավ, որ ըեխին մի դուռն ու կտուրը փագած օթախի մեջ պըհեն չքել մենձանալը. չունքի վախեր, որ չըլի՞ թե դարվիշը գա ու տենու։
Ո՛վ տարով կմենձանա, էդ ըեխեն օրով էր մենձանում։ Ո՛վ օրով կմենձանա՝ նա սըհաթով էր մենձանում։
Մի վախտ էլ բիրդան Դարվըշի միտն ընկավ էդ բանը. «Արի՛,— ասավ,— գնամ տենում ո՞նց ա էլել»։ Ու ճամփա ընգավ, եկավ հասավ էս թրգավորի ըմարաթնին։ Արի՛ դու հմի դրանց տես, որ ջլիզ չլուք էլալ, թե. «Ըսկի ըեխա չի էլել, թե՝ գիրը սուտ դուրս եկավ ու փլան-փստան»։
Դարվիշը, ղորթ ա, նրանց խոսքերին հըվատաց ոչ, հըմա ըսկի խոսաց էլ ոչ։ Նրան նստացրին, որ հաց ուտի։
Դու ասծու բանը ընդի տես, որ թրգավորի տղի կրցարանը Դարվիշի նստած տեղի դիմացրումն էր, ու հլե էդ սըհաթին նրա հըմամ էլ ին բաժին տարել, որ հաց ուտի։ Թարսի պես, Դարվըշի ահիցր տղի մերը ընհենց շշկլվել էր, որ բաժնի միջին մի ոսկոռ էր թողել, չունքի ամեն հետ նրա բաժնի մսի ոսկռոնին ջոգում էր։ Էս տղեն միսը որ կերավ հա, ոսկոռը

կրծեց, կրծեց, տեսավ ծամվում չի, ջիգրը եկավ, շպրտեց, փանջարովը տվեց։ Փանջարեն շըրիխկալեն ետ բաց էլավ, ու արևի շողքը տուն ընգավ։ Թըգավորի տղեն հըսկացավ ոչ, թե էն ինչ բան ա, շատ ըրմացավ ու տեղիցը վիկացավ արևի շողքի հետ կոխ բռնեց, որ սաքի թե՝ տանիցը դուս անի։
Հըմա փանջարի թրխկոցի ձենը Դարվըշի անգաձն ընգավ. նա տեղիցը վիկացավ փանջարովը մտիկ տվուց, տեհավոր թըգավորի տղեն արևի շողքի հետ կոխ ա ունում. էն սըհաթնևետ գլխի ընգավ, որ թըգավորը իրեն խափել ա։
Դարվըշի ջիգրը շատ եկավ, թըգավորի տղին մտիկ արավ ու մի գեշ անիծը ասավ։
— Ի՜նչ անեմ,— ասավ, ա՛յ տղա, բալքա դուն Դունյա-գյոզալի բալբալեքին գաս։
Էս ասավ ու փասափուսեն հրվաքեց գնաց։
Մըխելի վախտից եդը թըգավորի կնիգը գնաց իր տղին ակը տալու. տուն մտավ ի՜նչ տեհավ, որ տղեն արևի շողքի հետ էնգրգամ կռիվսն ա տվել, որ քափ-քրդնքըմը մտել ա։
— Էդ ի՞նչ ա քու հալը, բալա՛ ջան, ինչի ես ըթենց քրդնել։
— Բա էս ի՞նչ ա, որ տուն ա մտել, կարում չեմ դուս անեմ։
— Ա՜յ որդի, էդ ի՞նչ դուս անելու բան ա, որ ասըմ ես, էդ խում արևի շողքն ա։
Տղեն գլխի չի ընգավ։ Ըժու մերը կենդ-կենդ պատմեց թե. «Ախըր, ա՛յ որդի, լիս-աշխար կա, երգինք կա, արև ու լուսնյակ կան, մարդիկ կան»,— ու ամեն բան հըսկացրուց։
Տղեն հլե ըստոնք իմացավ թե չէ, ասավ.— Դե՛, մերա՛ ջան, ինձ դուս տարեք, տենում ի՞նչ թավուր ա էդ աշխարքը։
Մերը չուզեց, որ տղի սիրտը կոտրի, համ էլ Դարվիշը գնացել պրծել էր, տանը պըհելու էլ ի՞նչ մըհանա կար, վիկալավ ու դուս բերուց։
Տղեն որ դուս չեկավ լիս աշխարք ու չորսի կռանը մտիկ տվո՜ւց, խելքի ծերը կուլ գնաց։
Մտիկ տվուց իր հոր ըմարաթնուն, քաղքի սիրուն-սիրուն տներին, ղրաղների կանաչ դոշավոր ղարղու ղամիշ սարերին, մերենու շիմշատշիմշատ ծառերին, դրանց ստեղծող ասծուն ու ջըլիզ ըրմացավ ու քեփն եկավ։
Ասավ.— ես ուզըմ եմ քաղքիցը դուս գնամ, մը քիչ ման գամ, որ դհա սիրտս բաց ըլի։
Էն սհաթն ևեթ թըգավորը իր թալիմ տված հրեղեն ձին թամքիլ տվուց ու տղին նստացրուց, որ գնա ման գա։
Տղեն ձին նիըլավ, տասը գուրթնամեկը քշեց ու եդ եկավ. մին էլ քշեց ու էլի եդ եկավ. վրա իրերն էլ որ քշեց հա՜, մըքիչ ավել գնաց ու հետն ու հետը աղաք քշելով շատ հեռացավ ու էն գնալն էր՝ ինչ գնաց։
Դարվշի անեծքը քյար արավ։
Թըգավորն ու կնիգը էնդդամ ճամփա պըհեցին, որ աչքները ջուր կըտրեց. եկավ ոչ, եկավ ոչ։
Ղոշուն դուս արին, սար ու ձոր, քոլ ու չոլ ման ածին՝ հըմա ի՞նչ խոսք ա, հրեղեն ձիու եդնուց ըսկի կհասնվե՛ր, թըգավորի տղի իզն ու թոզն էլ չի ըևաց։
Հմի գանք թըգավորի տղի կուշտը։
Սա վրա իրեք հետն էլ որ ձին քշեց, շատ դիր եկավ, սիրտն ուզեց որ մըքիչ էլ աղաք գնա ու ըթենց գնալովգնալով շըլիզ հեռացավ։
«Գնամ,— ասավ,— գլուխս բադա տամ ու Դարվըշի ասած Դունյագյոզալին գդնում»։
Գնա՜ց, գնաց, էլ շատն ու քիչը աստոծ գիդի, չքել հասավ մի ղորուղ տեղ, որ կանաչ խոտը մարդաբոյ կանգնած էր. ընդեղ ձիուցը վեր եկավ, որ համ մըքիչ դինջանան, համ էլ ձին ըրածի։
Օրը սաքի թե էն ա հա մթնաժոռել էր։ Բիրդան բիր, որդյան որ էր՝ մի մարդ ըուլըլմիշ էլավ թըգավորի տըղի ըղաքին։ Էդ մարդը ուսին դրած մի թոփուզավոր երկաթե չոմբախ ուներ, որ ծերը հարիր փութ կըլեր, կոթը՝ քառասուն։ Թըգավորի տղի թուք ու մուքը սառավ։

— Բարի՛ րիգուն, ա՛խպեր,— ասավ երկաթե չոմբախավորը,— ի՞նչ մարդ ես դու,— ասավ,— որ էս դոբուղը ըրածացընըմ ես։
— Է՜հ, ճամփորդ մարդ եմ, ի՞նչ անեմ, ախպե՛ր ջան, ձիս սոված էր, ասի՝ մըքիչ ըրածացնեմ ու գնամ ճամփես, ասծու խաթեր, բա՛շխի։
— Էդ շատ բարի,— ասավ,— հըմա ոնց որ տենըմ եմ՝ խամ մարդ ես, արի ինձ ասա քու ով ըլիլը, քու բանի անումը, յա էս ա մթնել ա, քշերըս ո՞րտեղ պտիս կենալ։
Թըգավորի տղեն մըխելի շշկլվելու արավ, ու ինքն էլ հարցըուց թե.- Բա դո՛ւն ո՞վ ես, ախպերացո՛ւ, հարցնիլն ամոթ չըլի։
— Ես էս հանդերի ղորըղչին եմ,— ասավ,— ու ինձ էլ Ղասաբ-օղլի են ասըմ։
— Ես էլ էն փլա՛ն թըգավորի որդին եմ,— ասավ,— ու Դունյա-գյոզալը իմ բութեն ա, ինչ ըլի ըլի՝ ես նրան գդնուլ պտեմ։
Ղասաբ-օղլին մատը կծեց, էն սհաթը գլխի ընգավ, որ սրան անըծել են ու մեղքը շատ եկավ։ Նա լավ գիտեր, որ թըգավորի տղեն Դունյա-գյոզալին գդնողը չի ու գլուխն էլ մի օղբաթի կտա։
— Դե որ ըթենց ա,— ասավ,— արի ես ու դուն ախպերանանք, ու ես էլ հետդ կգամ, չքել որ քի քու մուրազին հասցնեմ։
— Շատ բարի,— ասավ թըգավորի տղեն, ու իրար ձեռը տվին, պռոշտի արին, ասծու ըղաքին ուխտ դրին, որ մչվանց իրանց մահը հալալ ախպեր ըլին։
Ըժու Ղասաբօղլին ասավ.— Ախպե՛ր ջան, ես մի Ջադուքյար պըռավի տեղ գիդեմ, արի՛ գնանք նրա կուշտը, թե,— ասավ,— նա՛ մեզ կասի Դունյա գյոզալի տեղը, թե չէ՝ ուրիշ ոչ ով չի գիդենալ։
Սրանք վիկացան ճամփա ընգան։ Թըգավորի տղեն ձիով էր, Ղասաբօղլին ոտով, հըմա հենց եդին գներ էն հարիր ու քառսուն փթանոց թոփուզն ուսին, որ թըգավորի տղի հրեղեն ձին եդնեն հասներ ոչ։ Մախլասի՝ շատ գնացին, թե քիչ, էդ աստոծ գիդի, գնացին հասան Ջադուքյար պըռավի տունը, որ մի վերանա չոլում մենամենակ կենում էր։
— Բարի րիգուն քի, նա՛նի,— ասին ու կաղնեցին։
Ջադուքյար պառավը ըռանց «աստծո բարին» ասելու, «Ի՞նչ մարդիկ եք,— ասավ,— որ էս կես քշերին եկել եք. ես տեղ չունիմ,— ասավ,— գնացե՛ք ձեր բանը»։
Էս սառը ջուղաբը որ իմացան հա, Ղասաբ-օղլին ուզեց, որ մի մըհանով իր հունարը շանց տա, ու թե.— Դե լավ,— ասավ,— նեղանալ մի, հրես գնում ենք, հըմա նանի՛, նանի՛, հրեդ ծնդանըդ վրա մի լու կա։
Էս ասավ ու մթամ թե ուզեց, որ թոփուզի ծերովը լուն շանց տա։ Հլե որ թոփուզի ծերը դրեց պըռավիս ծնգան վրա, պառավը չքել կեսը գետնումը մեր մտավ. ըժու եդ հանեց ու դըբա դուռն ըղու էլավ։ Պառավը տեհավ, որ չէ՛, հաքես սրանք հայդահայդա մարդիկ չեն, համ էլ վախեց, թե չլի՞ իրան սպանեն, մթամ թե սկի բանի խաբար չէր, վիկացավ ու սրանց թե. «Ա՛յ որդիք, բարով, հըզար բարի եք եկել. աղբաթիխերեր, էսչախին ո՞ւր եք գնում, էս մի քշերն ըստի կացեք, ըժու աստոծ ձեզ հետ»։
Նրանք մնացին։
— Նանի՛,— ասավ Ղասաբօղլին,— մենք քու կուշտն ենք եկել ու մի մուննաթ ունենք, հըմա կըտարիլ պըտես։
— Աչքիս վրա, բալա՛ ջան,— ասավ,— ա՛սա տենում էդ ի՞նչ բան ա։
— Դունյա-գյոզալի տեղը մեզ ասիլ պտես, նանի՜ շան, չունքի էս իմ ախպոր բութեն ա. սրա խաթեր գլուխս բաղա պտեմ տալ ու գգնալ։
— Է՜, է՜, էդ լաբոլ դժար բան ա, որդի՛, էլըհե ջհել վախտս էր էլել՝ կիմանեի, հըմա հմի կարալ չեմ։

— Էլ դես, դեն չկա, նա՛նի, ոնցորիսա պտես իմանալ ու մեզ սրվորացնել։
Պառավը մրքիչ միտք արավ միտք, ու թե.— Դե՛ լավ,- ասավ,— քնեցեք չքել բարի լիսը բաց ըլի, ըռավոդը կասեմ։
Ըռավոդը որ վիկացան, երեսները լվացին, աղոթք արին պրծան, պառավն ասավ.— Հրես էս ճամփեն կբռնեք՝ կերթա՛ք, կերթա՛ք չքելը որ մի մենձ մերի ռաստ կգա. էդ մերումը մի անվերիվերի տեղ մի մենձ ըմարաթ կա, Դունյա-գյոզալը էդ ըմարաթի միջին ա, օխտը ուշաբ ախպեր ունի, նրանք օխտը օթախ մին մնի վրա փագած՝ շըլիզ ծերի օթախումն են պըհում Դունյա-գյոզալին։ Հմի աստոծ ձեզ հետ ու ձեր մեղքը ձեր շլինքը։
Պըռավին շնորհակալութին արին, ասծու անըմը տվին ու ճամփու ընգան։
Քա՛նի օր, քա՛նի շաբաթ, թե քանի ամիս ճամփա գնացին, էդ աստոծ գիդի, չքելը մի րիգու հասան պըռավի ասած մերու միջի Դունյա-գյոզալի ուշաբ ախպորտանց ըմարաթնուն։
Ըմա՛րաթ եմ ասըմ, որ սաղ ըշխարքումը ինչդդամ թրգավորնի կան, չիմնու ըմարաթնուցն էլ լավը։ Տանը ոչով չկար, ուշաբնին ֆորսատեղն ին, Դունյագյոզալն էլ զաթի օխտը օթախի միջին փագած էր։ Դռանը օխտը օջաղ կար վառած, ամեն օջաղի վրա մի մեձ ընգնավոը պղինձ դրած կսկարենքնու վրա։ Էդ պղնձնու միջին էլ մնումը սաղ-սաղ գոմեշ, մնումը եզը, մնումը ոչխար ու ջուռաջուռա ֆորսի մսեր՝ խլթխլթալն եփում ին։
Ղասաբ-օղլին ու իր ախպերը ըմարաթնու պատի տակին թագ կացան մըչվանց տենուն, թե ինչ ա ըլում։
Հենց որ լավ ղըրանլուխն ընգավ հա, մին էլ էն տեհան՝ հրես օխտը ուշաբ ախպերտինքն էլ եկան՝ սպանոտած ֆորսերը ուսներին. մընի շըլակին՝ սաղ պախրա, մընի շըլակին՝ վերու վարազ ու ջուռաջուռա ֆորսի մսեր։ Շալակնին վերածին ու սոված գիլանու պես վրա էլան պղնձնուն։ Հըմա էն սըհաթը ֆոտով իմացան, որ իսանի ոտ ա մտել իրանց ֆողը։ Իրար հարցրին ու էդ սուս կացան, չունքի ասին՝ ով սիրտ կանի իրանց օլքեն ոտ կոխի։
Խելի վախտից եդը Ղասաբօղլին ախպորը թողուց տեղն ու ինքը վիկացավ ուսուլով աղաբ գնաց դըբա ուշաբնին։ Թոփուզը ղրաղին վեղրուց, ջիլիզդան մոդացավ, «Բարի րիգուն» ասավ ու, ոնց որ ինքն էլ նրանց ախպերն ըլի, ղամի տակիցը ղըմալթին հանեց, խփեց մի պղնձի միջի սաղսաղ դրած կիսաեփ գոմշի մեջն ու դուս քաշեց դրուց ըղաքին, կցեց թլաշիլն ու անոշ անիլը։
Ուշաբնին ջրլիզ ըրմացան նրա սրտոտութենիցը. իրար ըրեսի մտիկ ին անում ու գլխնին պտըտում։ Մին ուզում ին, որ վրա ընգնեն թիքաթիքա անեն Ղասաբօղլուն, մին էլ մտքնումը ասում ին. «Թո՛ղ մրքիչ հեռանա, ըժու մենք գիդենք»։
Ղասաբօղլին որ տեհավ սրանք հացիցը եդ դառան ու իրան խեթրխեթն են անըմ հա՛, ասավ.— Ա՛յ ուշաբ ախպերտինք, ես ոնց որ տենըմ եմ՝ ձեր ջիգրը ինձ վրա շատ ա գալի, դե որ ըթենց ա՝ փետս ինձ տվեք, ես գնամ։
Սրանք էն սըհաթին իրանց պուճուր չոլախ դև ախպորց հրամայեցին, որ փետն իրան տա։ Դևը ման եկավ ման՝ փետը գդավ ոչ։ Ըժու Ղասաբօղլին մատով նշանց տվուց. դևը մոդացավ, ի՛նչ տեհավ, որ մի հըչամաթ երկաթե թոփուզ ա. չալիշ էկավ չալիշ՝ ու ըսկի կարաց ոչ թե մի թիքա էլ ա ժաժ տա։ Ուշաբնին տեհան որ շատ ա չրրչարվըմ՝ կենդկենդ վիկենալով, վիկենալով՝ չիմն էլ վրա ընգան էդ թոփուզի վրա ու նորնոր կոթը գեդնիցը բըրցրացրին ու եդ վեգձեցին։
Ըժու ջանըմսա՛ն Ղասաբօղլի, տեղիցը ծուլ էլավ, վրա թռավ, թե.— Ինչ կա ըստի, տնաշե՛նի, որ ըթենց տանջվըմ եք,— ու որ մի ձեռով բըցրացրուց ոչ, էս քու ուշաբնու թուքը սառավ։
Տեհան որ չէ, կասենաս սա ուրիշ ջուռա մարդ ա, թե բանը էն՛ տեղը հասցնեն, օխտին էլ կկտորի, փափկեցին ու թե.— Էսչախին ո՞ւր ես գնըմ, ա՛յ ախպեր, համեցեք էս քշեր մեր կշտին

ղոնախ կաց, ղոնախը ասծունն ա, էքուց դվորը որ կուզես, աստոծ քի հետ, հըլա մենք էլ կտանենք մեր սնուռը անցկըկացնենք։
— Ես հլե ձեր կուշտն եմ եկել,— Ղասաբօղլին ասավ,— ու մի մուննաթ ունեմ, մախսուզ պտեք կըտարիլ։
— Ի՞նչ մուննաթ ա,— ասին,— հրամանք արա՛ տենունք, թե մեր ձեռիցը գալու բան ա՝ աչքներուս վրա, խի՞ չենք կըտարիլ։
— Ես մի ախպեր ունիմ,— ասավ,— հրե ձեր ըմարաթի պատի տակին ա, կանչեցեք գա ըստի, ըժու կասեմ։
Դնին ղրգեցին' թրգավորի տղեն եկավ, «Բարի րիգուն» ասավ ու նստեց։
— Հրես իմ ախպերը, ուշաբ բարեկամնի՛,— ասավ, ձեր քիր՝ Դունյազյոզալը սրա բութեն ա, եկել ենք ձեր կուշտը, մուննաթ ենք անըմ, որ Դունյազյոզալին իմ ախպորը տաք, իրար հետ պսակենք, գնան հասնեն իրանց մուրազին։
Ուշաբնու ջիգրը շատ եկավ էդ հըմարձակ խոսքերի վրա, հըմա ի՞նչ կարեին ասիլ, ի՞նչ զոռ ունեինք Ղասաբ-օղլուցը ուռի նման դողում են։
Մի վախտ դես ու դեն գձեցին թե. «Մենք քիր չունենք», հըմա որ Ղասաբ-օղլին ասավ թե. «Դունյազյոզալի անումն ու գովասանքը ալամ ըշխարին այգին ա», էն վախտն էլ թե. «Մարդի ենք տվել» ու փլանփստան։
— Էլ դես, դեն չկա՛,— Ղասաբ-օղլին ասավ,— ես շատ լավ գիդեմ, որ Դունյազյոզալը էս սհաթին ձեր ըմարաթումն ա ու օխտը դուռը վրեն փագած ա, մի խոսքով՝ թե չեք տվել, ձեզ սաղ թողնուլ չեմ, էն ըմարաթնու դռներն էլ ջարդ ու փշուր կանեմ ու Դունյազյոզալին կտանեմ։
Ուշաբնու վրա սառը ջուր մաղվեց էս խոսքերի վրա։ Ճարներուն կտրվեց, ղաբուլ կացան ու ասին.— Դե թող ախպերըդ էլ հաց ուտի, կքընենք, վի կկենանք ու էքուց ըռավոդ նշան կդնենք։
Էքսի ըռավոդը թրգավորի տղին տարան Դունյա-գյոզալի կուշտը, մին մնու շանց տվին ու եփ տեհան, որ աղջիկն էլ տղին հըվանեց, խոսք տվին, որ մի քանի օրից եդը պսակեն։ Ըժու երկու նշանածին թողին իրար կշտի, իրանք՝ օխտը ուշաբն էլ։ Ղասաբ-օղլին էլ, վիկացան գնացին ֆորսի։ Հըմա օխտը օթախի դուռն էլ նրանց վրա ղայիմ փագեցին։ Երկու նշանածը մնացին մենակ ու կցեցին քաղցրը զրիցը, իրար հետ խաղսը տալը, մի խոսքով, գիդեք էլի՝ թե թազա նշանածնին ինչ կանեն։ Մին էլ թրգավորի տղի աչքովը մի մենձ ջըղացաքար ընգավ, որ օթախի մեջտեղը վերընգած էր։
Սա եդ դառավ Դունյա-գյոզալին հարցրուց, թե «Ախր էս եքա ջրղացաքարը էսթավուր օթախի միջին ի՞նչ ա շինըմ»։
— Ոչի՛նչ,— ասավ Դունյա-գյոզալը,— դե ով գիդի իմ ախպորտանց բանը. վիր են կալել բերել ըստեղ վեգձել։
Սաքի թե ուզեց շլով տա իր նշանածին, հըմա նա հըվատաց ոչ.
— Չէ՛, ասավ,— էդ ուրիշ բան կըլի, դու ինձ խաբում ես, հալբաթ ինձ սիրում չես, որ դրուստը չես ասում,— ու էնդդամ եդնաց, որ ասիլ տվուց։ Դե ինչ կուզի ըլի՝ աղջիկ էր, Էլի՛, չուստ խաբվեց։
— Դե որ ըթենց ա, կասեմ,— ասավ,— հըմա էդ քարին ձեռը չի տաս։ Էդ քարի տակին,— ասավ,— մի խորը ֆոր կա. էդ ֆորի միջին էլ մի օխտը գլխանի ուշաբի ջամսաթ կա՝ ղիմա-ղիմա կտորած։ Հըմա,— ասավ,— չունքի դրա ֆոքին էն թավուր անհասնելի տեղ ա, որ ոչով չի կարում գդնի, որ սպանի. իրան կտորեցին իմ ախպերտինքն ու էդ ֆորի մեջը գձեցին, քարն էլ դրին, որ դուս չի գա։ Ընդուր որ,— ասավ,— Ուշաբ-զսմին էնթավուր բան ա, որ ֆոքին ուրիշ տեղ ա պըհում, ու չքելը ֆոքին սպանեն ոչ, իրան ինչդդամ կտորեն, էլ եդ կսղնա։

— Բա էդ ընչի՞ խաթեր են կտորել դրան քու ախպերտիքը,— թըգավորի տղեն ասավ։
— Ընդուր խաթեր,— ասավ Դունյա-գյոզալը,— որ դա ինձ վրա ջունուն էր էլել, ուզեր փախցնի։
Թըգավորի տղի սիրտը համփերեց ոչ. սա էլ քարին դես բզտեց, դեն բզտեց։ Դունյագյոզալը ինչղդամ հարան փրղան արավ, որ ձեռք չտա ու վերջը փոշմանի՝ չէլտվ, ո՞ւմ կասես։ Էնղադամ արավ, որ քարը մի քիչ ծռեց, լիսը ֆորն ընգավ ու ընդեղից մի խուլ ձեն դուս էկավ, թե. «Աստո՛ծ սիրող, ծարավ եմ, ջուր հասցրեք»։
Թըգավորի տղի մեղքն էկավ, էն զգամ չըրչարվեց, որ քարը ֆորի բերնի ցր գձեց, սաքի թե ուզեց մի հանգով ջուր հասցնի։ Մին էլ մի էնթավո՛ւր գոռգոռոց վերելավ ֆորիցը, որ հլեի ամբի գոռոց ըլեր։ Օխտը գլխանի ուշաբը ֆորիցը սրղացավ դուս էկավ։ Դուս էկավ, տարավ բերեց մի լավ թըթալոշ հասցրուց էս խեղճ թըգավորի տղի բերնին ու Դունյա-գյոզալին վիկալավ փախցրուց։ Թըգավորի տղեն, ըսօր ես գնացել, թե էրգ, իրանից գնաց ու մեռածի պես ֆորի ղրտղնիվեր փռվեց։
Մըքիչ վախտից եդը ուշբանին ու Ղասաբ-օղլին ֆորսատեղիցը եդ էկան, տուն մտան՝ ի՛նչ տեհան, որ բանը բանիցը անց ա կացել։ Ուշաբնին էն սհաթը գլխի ընգան, որ թըգավորի տղի արած բանն ա։ Ղասաբ-օղլին էլ որ տեհավ իր ախպերը նղաված վերընգած ա հա, խելքը գլխիցն ընգավ ու կցեց վրեն սառը ջուր ածիլ, անգաճնուցը ձգձգիլ, բերանը փետի կտոր կոխիլ, քներակներուն հուփ տալ, չքելը որ եդ բերուց։ Ուշաբնու ատամնին ղըռնշնոտում ին, որ մի ձեռաց թիքա-թիքա անեն թըգավորի տղին, հըմա Ղասաբօղլու ահիցը ժաժ չին գալի։ Եփ թըգավորի տղին հարց ու փորձ արին՝ ամեն բան իմացան, մնացին շվարած։
Ղասաբ-օղլին ասավ.— Ի՞նչ եք շշկլվում, ինձ քառասուն օր վադա տվեք, էն ասծու անըմը կտամ ու ճամփու կընգնեմ. թե քառասուն օրումը ձեր քվերը բերի՛՝ խում շատ լավ, թե չբերի հա՝ հրեդ իմ ախպերը թող ձեր կշտին գրավ ըլի, ըժու ինչ ուզըմ եք արեք։
— Դե որ ըթենց ա,— ասին ուշաբնին,— արի՛ էն ուշաբի տեղն ասենք։ Էդ ուշաբը,— ասին,— ինքն իր հըմար ջոգ երգիր ունի, հրեն է՛, փլան ըշխարքումը։ Նրա երգրի չորսի կուռը ծովով պատած ա ու մեջը խոռը մերի ա, իրանից սավահի ոչով չի կարում ծովն անց կենա։
Ղասաբ-օղլին գնալուց աղաք իր ախպորը քշրքով քաշեց՝ հենց պահ տրվուց ուշաբնուն.— Տեհե՛ք,— ասավ,— չթել իմ գալը լավ պըհեցեք, չլիմչիմանամ, թե քաշիցը մըքիշ պակսել ա, վա՛յ ձեր մեղքը։
Ըժու ասծու անըմը տվուց, թոփուզը ուսին դրուց ու դու էլավ։ Ղասաբօղլին գնա՛ց, գնա՛ց, հըմա ինքն էլ չէր գիդըմ, թե ո՞ւր ա գնում։ Շատ էր գնացել, թե քիչ, էդ աստոծ գիդի, մի օր էլ գլուխը քաշ արած, մտքի տունն ընգած իր ճամփեն գնալիս մի ղըլմաղալի ձեն ընգավ անգաճը։ Գլուխը բըցրացրուց տեհավ, որ իրանից խելի հեռու, իրեք մարդ ճամփու մեջտեղը կռվում են։
Նրանք էլ որ սրան տեհան հա՛, մին մնու ասին.— Ա՛խպեր, հրե էն ղարիբ մարդին բերեք դըտամեր կարգենք, ոնց ասի՝ չիմբս էլ ղաբուլ կանենք։
Ղասաբօղլին մոդացավ տեհավ, որ դրանց կռիվը մի խալըչի, մի ճիպտի ու մի թաղքե գդակի վրա էր։
— Բարի՛ օր,— ասավ Ղասաբօղլին։
— Ասծո՛ւ բարին,— ասին էն իրեք մարդը։
— Էդ խի՞ եք կռվում,— ասավ։
— Ղարիբ ախպե՛ր,— ասին,— մենք էս իրեքս էլ հալալ ախպերտինք ենք. մեր հերը հարուստ մարդ էր, մեռնելիս իր կարողութինը ընենց վասյաթ արավ, որ նրա թողած փողը մի ախպորս ըլի, մնացած դովլաթը մեկել ախպորս ու էս խալըչեն, ճիպոտն ու քեչաքուլլուգը վրա իրեք

ախպորս։ Հմիկ մեր կռիվը էս բաների վրա ա. ես ուզում եմ ըստոնք ինձ ըլին, փողն ու կարողությունը՝ նրանց։ Նրանք էլ ուզում են, որ իրանց ըլի։ Լմի քե մուննաթվըմ ենք, որ մեր վճիռը տաս։
— Ախր սրանք ի՞նչ բաներ են, որ կռվում եք,— ասավ ըրմացած Ղասաբ-օղլին։
— Սրանք է՛ն բաներն են,— ասին,— որ էս քեչա-քուլլուգը որ գլխիդ դնես ու խալխի միջին կաղնես, ոչով քի տենուլ չի, հըմա դուն չիմնուն էլ կտենուս։ Էդ խալըչի վրա էլ որ նստես, աչքերդ խուփ անես ու էդ ճիպոտովը տաս, հլե ի՞նչտեղ որ ասես՝ ձեռաց կթռչի ու ընդի վե կգա։
Ղասաբօղլին մըքիչ միտք արավ, միտք ու թե.— Հլա տվեք տենում։
Ձեռներուցը առավ քեչա-քուլլուգը, դրուց գլխին, մըքիչ հեռացավ՝ տեհավ որ դրուստ իրան տենըմ չեն։ Ըժու ձեռաց նստեց խալըչի վրա։
Աչքերը խուփ արավ, ճիպտով տվուց, ու թե.— Ա՛յ խալիչա,— ասավ,— է՛ փլան ծովի մեջտեղի ըշխարքումը, փլան ուշաբի ըմարաթի կողքին դուս գաս։
Խալըչեն թռավ։ Մին էլ աչքը բաց արավ, որ մի անվերի- վերի տեղ մի մենձ ըմարաթի կշտի վեր ա եկել։ Խալըչեն ու ճիպոտը տարավ մի ծառի տակի պըհեց, քեչա-քուլլուգը դրուց ջեբն ու կամաց-կամաց գնաց ընդի, տուն մտավ, որ ուշաբը գլուխը Դունյա-գյոզալի ծնգան վրա դրած քնած ա։ Դունյա-գյոզալը, որ Ղասաբ-օղլուն տեհավ հա՛, համ շատ ուրախացավ, համ շատ վախեց ու ձեռներով հըսկացրուց Ղասաբ-օղլուն, որ ուշաբի վիկենալու վախտն ա, թո՛ղ հեռանա։ Չունքի Ուշափղսմին օխտն օր իրար վրա քնում ա ու հմի հլե օխտն օրը թըմամել էր։
Ղասաբ-օղլին քեչա-քուլլուգը դրուց գլխին ու մնաց տեղնուտեղը կաղնած, հըմա Դունյա-գյոզալը հենց իմացավ, թե դուս գնաց։ Մըխելի վախտից եղը ուշաբը ճլնկոտաց, դես շուռ եկավ, դեն շուռ եկավ ու զարթնեց։
Հլե աչքերը բաց արավ թե չէ, Դունյա-գյոզալին ասավ.— Ըստեղ իսանի ոտն ա եկել, մըրթ մըրթաֆոտ ա գալի։
— Աղբաթիխե՛ր,— ասավ,— ո՞վ կարա քու երգիրը ոտը դնի, ո՞վ կարա էն ծովերը անց կենա, յա թե քու ահիցը ո՞վ սիրտ կանի մոդ գա, էդ ի՞նչ ես ասըմ։
Դրուստ ա, Դունյա-գյոզալի խոսքերը ուշաբին մըխելի դինջացրին, հըմա էլլըհե դուս գնաց, որ մի դես ու դեն աչքն ածի։
Ուշաբը դուս էլավ թե չէ, Ղասաբօղլին քեչա-քուլլուգը գլխիցը վի կալավ։ Դունյա-գյոզալի սիրտը դող ընկավ, ըրմացավ, թե՝ էն ի՞նչ բան էր։
— Չուստ արա՛ դուս իլ,— ասավ,— որ հրես տուն կգա։
— Վախիլ մի՛, ինձ բան չի լիլ,— ասավ,— ես եկել եմ, որ քի փախցնեմ, հըմա ինչ որ ասեմ կըտարիլ պտես։ Ուշաբը որ տուն գա,— ասավ,— հարցրու, իմացի, թե ո՞րդի ա ըլում նրա ֆոքին։
Էս ասավ ու ինքը դուս էլավ։
Ուշաբը տուն եկավ թե չէ, Դունյա-գյոզալը կցեց սուտ խունջիկ-մունջիկ անիլը, սուտ սեր շանց տալը, որ բալքամ ուշաբին խափի։
Ըժու, թե.— Ֆոքուդ տեղը ինձ շանց տա՞ս։
— Ի՞նչ ես անըմ,— ասավ,— ինչի՞դ ա պետքը։
— Ընդուր համար, որ դու ցերեկը սաղ օրը գնում ես ֆորսի, ես տանը մենակ նստած մըլորվում եմ, ըռանց քի սիրտս բաց չի ըլում, հլե ֆոքուդ տեղն էլ ա գիդենամ, որ հետը խաղամ, քու հավեսը հանեմ,— ասավ ու սուտ լաց եղավ։ Ուշաբն էլ հենց գիդեր, թե դրուստ որ իրան սիրըմ ա Դունյա-գյոզալը։

— Հրե՛դ,— ասավ,— իմ ֆոքին մեր դռան տակին ա,— ու ինքը դուս էլավ ֆորս գնաց։ Նրա գնալուց եղը Ղասաբ-օղլին տուն մտավ, որ իմանա, թե բանն ի՞նչումն ա։ Հլե որ իմացավ, թե ասել ա՝ ֆոքին դռան տակին ա, գլխի ընգավ, որ խափել ա։
— Բան չի կա,— ասավ,— դուն դասիդ ղուլլուղ արա, դռան փակը զուքի, զըրթարի, մթամ թե հըվատացել ես, որ նրա ֆոքին ըտի ա։
Ուշաբը ռիգունը տուն եկավ տեհավ, որ դռան տակը ռանգռանգ ծաղկներով փնջած, ըղաքին սիրուն շորեր փռած ու ղըրթարած ա։
— Ի՛,— ասավ,— ախր կնիկարմատ ես, է՛, ձեռաց հվատացիր, բա դռան տակին ֆոքի կլի՞։
— Բա ո՞րդի ա, խի՞ չես դրուստն ասըմ։
Թե.— Հրե՛դ մեր չալ սնի տակին ա իմ ֆոքին,— ասավ։
Էլեդ ինքը գնաց ֆորս։ Ղասաբ-օղլին քեչա-քուլլուգը գլխին ընդի կաղնած էր։ Տեհավ, որ հմի էլ խափեց ուշաբը։ Հըմա Դունյա-գյոզալին ասավ.— Բան չի կա, ըսօր էլ էդ չալ սինը զուքի, տենանք վերջը ի՞նչ ա ըլում։
Ռիգունը ուշաբը տուն եկավ տեհավ, որ Դունյա-գյոզալը հմի էլ չալ սինն ա զուքել, զրթաբել։ Էլեդ գլուխը պըտըտեց, հըմա տեհավ, որ մթա թե էս ա՝ Դունյա-գյոզալը դրուստ իրան շատ ա սիրում, մտքումն ասավ. «Արի՛, հմի դրուստն ասեմ»։
— Իմ ֆոքին,— ասավ,— ո՛նչ սնի տակին ա, ո՛նչ էլ դռան, շատ հեռու տեղ ա։ Հրե՛ փլան կռանը մի խոռը մերու միջի մի վանք կա, էն վանքի միջին մի դոլաբ կա, դոլաբի միջին մի ղութի կա, ղութու միջին էլ մի աղունիկ կա, էն աղունիկն ա իմ ֆոքին։
Ղասաբօղլին քեչա-քուլլուդը գլխին դրած՝ դռան կշտին կաղնած էր. հլե իմացավ թե չէ՝ դուս քսվեց ու զարբեց դբա ուշաբի ասած տեղը։
Աժդահա Ղասաբ-օղլին գնաց, հասավ վանքը, նի մտավ, դոլաբը բաց արավ։ Ղութին բաց արավ թե չէ, տանը ուշաբի սիրտը թռթռոցն ընգավ։
Էն սհաթը հըսկացավ, որ բանն ինչումն ա ու թե. «Հա՛, հա՛, քու տունը քանդվի, Դունյա-գյոզալ, ինչ իմ տունը քանդեցիր», ասավ ու տեղիցը ծուլ ըլիլն ու դբա վանքը ղու ըլիլը մին արավ։
Ղասաբ-օղլին դեռ նոր էր ղութին բաց արել, որ մին էլ մի էնթավուր գռգռոց, ֆշշոց ու ճռճռոց ընգավ վանքի մեջը, որ հենց իմացավ թե սար, ձոր, մերի ու քոլ պոկ են էկել ու գալիս են, թե իրան տակովն անեն։ Ղութին վեգձեց ու ֆոքին ձեռին բռնած՝ դուս գնաց վանքիցը, թե տենու էն ի՞նչ խաբար ա։ Դուս էկավ ի՞նչ տեհավ, որ սաղ մերին թողը հե՛նց ա բռնել, որ կասես չանգ ու ծուխ ըլի խառը, ընենց որ աչքը բան չջոկեց։ Դրուստ ա, Ղասաբ-օղլին վախլուկներիցը չէր, հմա հենց իմացավ, թե աշխարքը փուլ ա գալի։ Հլե մին էլ էն տեհավ, որ խելի հեռու՝ ուշաբն ընաց։ Հըմա ո՛նց ա գալի, ո՛նց ա գալի, որ տերը փրգի, ըզատի։ Էն գոռուն-գոչունը նա ա վեր արել ու նրա շնչի բուղն ա ու նրա քամու թոզը, որ սաղ մերին կապել ա։
Ղասաբ-օղլին էդ որ տեհավ՝ ըսկի վախեց ոչ, հըմա ուշաբի ֆոքու ճիտը մըխելի ըլորեց։ Մըխելի որ ըլորեց հա՛, ուշաբի ծնգները մըքիչ թիլացան, երիշը կըմանցացրուց ու Ղասաբ-օղլուն ձեն տվուց.— Ա՛յ իսանօղլի,— ասավ,— ասծու սիրու խաթեր, սպանիլ մի՛, էդ աղունակին, չքելը մի գամ քի հասնեմ. վախիլ մի՛, խոսք եմ տալի, որ քի զարար չի տամ։ Սաքի թե ուզեր խափի։
— Լա՛վ, արի՛, սպանիլ չեմ,— ասավ։
Հըմա հլե ուշաբը մոդացավ թե չէ, Ղասաբ-օղլին ձեռաց աղունակի ճիտը պոկեց, աղունակի ճիտը պոկիլն ու ուշաբի հանգչիլը մին էլավ։
Ղասաբօղլին որ տեհավ ուշաբը էն ա ինչ էս ըշխարիցը պրծավ հա՛, շատ ուրախացավ ու եգին-եգին ըղու էլավ եդ՝ դբա Դունյա-գյոզալը, որ նրան էլ ուրախացնի։

Էլ ինչ ասիլ կուզի, որ Դունյա-գյոզալը դհա շատ ուրխացավ, որ գերութենից պրծավ ու չուստ իր նշանածի տեսին էլ արժանի կըլի։ Ըժու Ղասաբ-օղլին նրան խըտատացրուց, որ չուստ սարքվի, ճամփու ընգնեն։
Դունյա-գյոզալը թե.— Էս մեր չալ սնի տակին մի բան կա,— ասավ,— գիդեմ ոչ ի՞նչ ա. չքելը քանդես ոչ իմանամ, թե ի՞նչ ա, ես գալ չեմ։
Ղասաբ-օղլին երկաթե թոփուզով մին հասցրուց թե չէ՝ չալ սինը տեղիցը թռավ, էն ղրաղին վեր ընգավ, ու մին էլ տեհան սնի տակիցը բարձր բոյով մի ջանաթաթախ կնիկարմաւռ դուս էկավ, որ կասեիր աժդրհա ըլեր։
Սրանք ըրմացան ու մնացին պել կտրած. հարցրին, թե.— Ո՞վ ես, ի՞նչ իսան ես։
Ասավ.— Ինձ Արաբուզանգի են ասըմ։
Ըժու Ղասաբ-օղլին թե.— Իմ կնիկը կդառնա՞ս։
— Խի՞ չեմ դառնալ,— ասավ,— քիանից լավ մա՞րդ։
Ըժու իրար խոսք տվին, խոսք առան, որ մարդ ու կնիկ ըլին ու Դունյա-գյոզալին էլ տանեն իր նշանածին հասցնեն։ Արաբուզանգին էլ Ղասաբօղլուցն էր ղվաթով։ Նրա երկաթե թոփուզը սա մի ձեռով բմբուլի պես էր բըցրացնըմ։
Ըժու իրեքն էլ էն խալըչի վրա նըստոտեցին, աչքները խուփ արին ու Ղասաբ-օղլին էն ճիպոտը տվուց ու ասավ. «Ա՛ խալիչա, որդիանց որ ինձ բերել ես, էլեդ ընդի վիգաս»։
Մին էլ աչքներուն ընդի բաց էլավ, որ էն խալըչատեր իրեք ախպերն էլ դեռ ճամփըմը կագնած են։ Ղասաբօղլին ըտի էլ դրանց քարսաղ արավ ու գնացին իրանց ճամփեն։
Շատ գնացին, թե քիչ, աստոծ գիդի, գնացին հասան Դունյա-գյոզալի ախպորտանց ըմարաթը, հլե է՛ն օրը, ինչ որ Ղասաբ-օղլու ընդիանց հեռանալուց եդը քառասուն օր թըմամել էր։
Ղասաբ-օղլին Արաբուզանգուն ու Դունյա գյոզալին մըխելի հեռու թողուց, ու ինքը ոտնեռտը աղաք գնալով դռնիցը անգաճ դրուց։
Թարսի պես ուշաբնին էլ էն սհաթին իրար է՛ն ին ասըմ թե. «Բերեք ուտենք էդ թըգավորի տղին, ո՞վ գիդի դրա ախպերն ի՞նչ էլավ, վադեն էս ա ըսօր թըմամել ա ու դեռ ըևում չի։ Հմի ո՞վ գիդի յա կորավ, յա մեռավ. ի՞նչ նրա բանն էր է՛ն ուշաբի ձեռիցը աղջիկ խլիլը։ Բերե՛ք ուտենք,— ասին,— մեր քվերը դա բադա տվուց»։
Հենց էս զրըցումն ին, որ Ղասաբօղլին բիրդան ընդիանց ո՛ր ասավ ոչ՝ «Ի՛նչ, ի՛նչ», էս քու ուշաբնու թուք ու մուքը սառավ։ Եդ ուզեցին իրանց գլուխը դրստեն ու թե. «Մենք հանաք անեինք» ու փլան-փստան։
Մախլա՛ս, Ղասաբօղլին ախպորը քչերքը դրուց քաշեց, տեհավ, որ հըլա մի փութ էլ ավելացել ա։ Ըժու Դունյա-գյոզալին ու Արաբուզանգուն էլ կանչեցին, բարովեցին ու էդ քշերը մենձ ուրախութին արին։
Ըռավոդը, բարի լիսը բաց ըլելու հետ, վիկացան ու կցեցին սարք ու կարգ անիլ, որ ճամփա, ընգնեն դրա Թըգավորի երգիրը։ Ուշաբնին շատ մուննաթ արին, որ հլե մի շաբաթ էլա իրանց կշտին ղոնաղ մնան, հըմա Ղասաբօղլին ղաբուլ չարավ, ասավ.— Վախտով իմ ախպորը տանեմ թըգավորի կուշտը, որ իր որդու բախտավորութինը տենու, ուրխանա։
Խեղճ ուշաբնու իլլաշը որ կտրեց, բերին իրեք լավ յորդա ձի թամքեցին Դունյա-գյոզալի, թըգավորի տղի ու Արաբուզանգու հըմար։ Ղասաբօղլուն ձի չէր պետքը։ Նրա եդնուց առանց էն էլ ձի չէր հասնըմ. մին էլ էս, որ նրա թոփուզի տակին ձի՛ կդիմանե՞ր։ Խուլահսա ձիանուն նի ըլան, ասծու անումը տվին ու ճամփու ընգան։
Քա՛նի օրըմը, քա՛նի շաբթըմը, թե քա՛նի ամսըմը տեղ հասան, էդ աստոծ գիդի, հըմա ճամփին ինչ որ անցկացավ՝ ես էն կասեմ։

Ղասաբ-օղլին ընենց եդին գներ, որ ձիանը եդնուց հասնեին ոչ։ Հըմա վախեր, որ ձիավորնուն ահ պըտահի, էն ա մըքիչ տեղ որ հեռաներ հա՛, նստեր չքել ձիավորն ու իրան հասնիլըն ու եդ զու ըլեր։ Մի հետ էլ ըթենց խելի հեռացել էր ու եփ մի ծառի տակի նստեց, որ գան հասնեն հա՛, նունջը տարավ։
Հլե էդ վախտը իրեք սիրուն աղունիկ եկան ու էն ծառի վրա վեր էկան ու մին մընու ասին.— Քի՛քիր։
— Ի՞նչ ա քի՛քիր։
— Գիտես ինչ կա՞։
— Ի՞նչ կա,— ասավ։
— Բա՝ ասիլ չես, որ թըգավորը իր տղի ու Դունյա-գյոզալի գալն իմացել ա, հըմա գիդի որ նրանց բերողը Ղասաբօղլին ա, մտքումը դրել ա, որ եփ գան քաղքին մոդանան հա՛, մի ըռախտած ու դեղած ձի ղրկի Ղասաբօղլու աղաքը՝ մթա թե պատիվ տալու, որ ինչ ա՝ Ղասաբ-օղլին որ վերըլի հա՛, դեղվի ու մեռնի։ Ըժու իր տղին էլ ուզում ա սպանիլ տա, որ աննման Դունյա-գյոզալին իր կնիկը շինի։
Էս ասին թե չէ, Ղասաբ-օղլու աչքը ընդի բաց էլավ, որ աղունիկնին թռչում են, հըմա նրանց ասածնին չիմ իմացավ։ Մըխելի վախտից եդը ձիավորնին եկան հասան ու եդ վիկացավ ըզու էլավ, հըմա աղունիկնու մասին նրանց բան չի ասավ։
Էլ ծերքի դոնուշվան պես ձիավորնուցը որ էփեջա հեռացավ հա՛, էլեդ ծառի տակին նստեց, որ գան հասնուն։
Էլի որ քունը մըքիշ տանելու արավ, էլեդ էն իրեք աղունիկը եկան ծառի վրա վերեկան ու մին մընու ասին.— Քի՛քիր։
— Ի՞նչ ա՛, քիքիր։
— Գիդե՞ս ինչ կա։
— Ի՞նչ կա,— ասավ։
— Բա՝ ասիլ չես, թըգավորը իր տան շեմքի ըղաքին մի մենձ խորը ֆոր ա փորիլ տվել ու բերանը խալըչով ծածկել, որ Ղասաբ-օղլուն ծերքին մեձրի, թե ինչ ա նա ոտքը խալըչի վրա դնի թե չէ՝ ֆորն ընգնի մեռնի, ըժու իր տղին էլ սպանիլ տա ու Դունյա-գյոզալին ինքն ուզի։
Էս ասին ու թռան։ Ղասաբօղլին էլ ասենք նղղած էր, հմա նրանց ըսածնին մըժա իմացավ։ Ձիավորնին որ եկան հասան հա՛, նա էլեդ ըռանցի բան ասելու աղաք ընգավ ու էլի որ շատ հեռացավ, մի ծառի տակի նստեց, որ գան հասնեն։
Ընդովվան պես հլե աչքերը կիսախուփ էլան թե չէ, էլի էն իրեք աղունիկը եկան ծառին նստոտեցին ու ասին.— Քի՛քիր։
— Ի՞նչ ա, քի՛քիր։
— Գիդես ինչ կա՞։
— Ի՞նչ կա։
— Բա՝ ասիլ չես, որ սրանք եփ թըգավորի տուն մտնուն հա՛, հացի վախտը Ղասաբ-օղլու բաժինը թըգավորը դեղած պտի դրդիչ տալ, որ սա ուտի ու մեռնի, ըժու իրան տղին էլ սպանիլ պտի տալ, որ Դունյա-գյոզալին ինքն առնու։
Ասին ու թռան։
Ղասաբօղլին բիրադի իմացավ, իրան պարզեր։ Ձիավորնին հասան ու իրար հետ ճամփու ընդան։ Հլե որ թըգավորի քաղքին խելի մոդացան հա՛, մին էլ տեհան, որ բոլմա դոշուն ա գալի իրանց աղաքը։ Թըգավորը, մթա թե պատիվ դեյին, իր տղի ու հարսի աղաքն էր զըրգել։ Դոշունի հետ էլ մի լավ ըռախտած, ոսկումն ու էրծաթումը կորած սիրուն ձի քաշելով բերին ու

դրուստ Ղասաբ-օղլուն թրվազա արին, թե. «Թրգավորն իմացել ա, որ դու ոտով ես գալի՝ էս ձին ղրրգել ա, որ նի ըլես»։
Ղասաբօղլին ըսկի ծպտուն չի հանեց, թոփուզը բրցրացրուց ու էս ըռախտած ձիու կողքին որ թխեց ո՛չ, ձին վերընգավ ստակեց։
Ըժու որ հասան թրգավորի ըմարաթնու դուռը հա՛, թրգավորը ինքը դուս էկավ բիրադնուն էլ բարովեց ու չիմնու ծերքին Ղասաբ-օղլուն մեձրեց։ Սաքի թե՝ կրպկապութինով ուզեր նրան խափի։
Հրմա Ղասաբ-օղլին որ մրխելի աղաք գնաց ու տեհավ, որ շեմքի ըղաքին դրուստ որ խալրչա կա փռած, ինքը խալրչի վրովը լոք արած կաղնեց ու դեռ Դունյա-գյոզալին, թրգավորի տղին ու Արաբուզանդուն անց կացրուց, ըժու ինքը նրանց եդնուց տուն մտավ։ Ֆորը հլե դու-դու կան չելեն մնաց։ Մախլասի, էլ գլուխներդ ի՞նչ ցրվացնեմ, մը քիչ վախտից եդը սուփրեն գծեցին, հաց քաշեցին։ Հլե որ բաժրննին բերին հա՛, Ղասաբ-օղլին կերավ ոչ, իր բաժինը վեկալավ ու ընդի մի պուճուր շուն կա՝ տվուց իրան, շունը կերավ թե չէ՝ ստակեց։
Թրգավորը խու սաղ-սաղ մեռավ, չունքի իրա սարքած հունարնին մժու չիմ բեհտին անցկացան։ Հրմա մտքումը դրուց, որ ոնց որ ըլի Ղասաբ-օղլուն մի հանգով փոթոցի տա։
Մի օր թրգավորը Ղասաբ-օղլուն ասում ա.— Կէրթաս համ անմրհական ջուր կրբերես ինձ հրմար, համ անմրհական խնձոր։
— Լա՛վ, կէրթամ,— ասում ա Ղասաբ-օղլին։
Ասծու անրմը տվուց ու դու էլավ։ Գնալու վախտը մի գեղի ղրաղի մի պառավ կնգա ռաստ էկավ, նրանից խմելու ջուր ուզեց։
Պառավը ջուրը տվուց ու հարցրուց, թե.— Ո՞ւր ես գնում, ո՛րդի,— ասավ։
Նա էլ դրուստ ասավ։ Պռավը էն սհաթը գլխի ընգավ, որ թրգավորը չալիշ ա գալի, թե էդ մարդին փոթոցի տա։
— Որդի՛ ջան,— ասավ էդ պռավը,— անմրհական ջրի ու խնձորի գրնացողը ընդեղից եդ գալիս քար ա դառնրմ։
— Նանի՛, — ասավ,— ո՞նց ա ըլում, որ քար ա դառնում։
— Ընդեղ մի աղջիկ կա,— ասավ,— թլիսմն ունի՝ ընդով ա քար շինրմ. ո՛ր գնաս,— ասավ,— ջուրը վերունես, խնձորն էլ պոկես ու եդ դառնաս հա՛, էլ եդ չի մտիկ անես. թե որ եդ մտիկ տվիր՝ քար կդառնաս։
Ըտոնք ասավ ու անմրհական ջրի ու խնձորի տեղն էլ սալրդ տվուց։
Ղասաբ-Օղլին պրռավին շնորհակալութին արավ ու գնաց իր ճամփեն։
Շատ գնաց, թե քիչ, էդ աստոծ ա իմանրմ, ոնց որ էր՝ տեղ հասավ։ Տեղ հասավ, անմրհական ջուրն ու խնձորիցը վիկալավ ու եդ դառավ։
Եդ գալիս պռավի ասած աղջիկը աղաքը կտրեց, թողուց ոչ, որ անմրհակաան ջուրն ու խնձորը տանի, ասավ.— Արի՛ կոխ ունենք, թե ես քի վեգձես հա՝ էդ ջուրն ու խնձորը քի հալալ ըլի։
Սրանք իրար կալան։ Իգիթ Ղասաբ-օղլին իրեք հատ հե՛ գեդնի ճրկատովը տվուց, որ ամեն վեգձելով իրեք թիզ գեդնրմը թաղվեց էդ աղջիկը։ Տեհավ, որ ըթենցով Ղասաբ-օղլու հախիցը կարաց ոչ գա, ասավ.— Տա՛րար, թավը քունն ա, հմի տերը քի հետ։
Ղասաբ-օղլին ըղու էլավ թե չէ՝ աղջիկը թլիսմն արավ ու եդնուց էնդդամ ղլմաղալ արավ, որ խեղճը յանղլիշ եկավ, եդ մտիկ արավ։ Եդ մտիկ տալն ու քար դառնալը մին էլավ։
Նրան ըտի թողունք քար դառած ու գանք Արաբուզանգու հալը հարցնենք։ Խեղճը ճամփա պհեց, ճամփա՝ ու որ տեհավ եկավ ոչ հա՛, իլլաջը կտրեց՝ ինքն էլ նրա եդնուց գնաց։ Գնալու վախտը նա էլ էն պրռավին ռաստ էկավ։

Պառավը հարցուց թե.— Ո՞ւր ես գնում, բա՛լա ջան։
Թե բա.— Նա՛նի,— ասավ,— էս ճամփենին ո՞ւր են տանում։
Պառավը մատը կծեց, հըսկացավ, թե բանն ինչումն ա ու թե.— Ո՛րդի ջան,— ասավ, մի քանի վախտ սրանից աղաք մի տղամարդ էլ ըթե քի նման էս ճամփեննի գնաց ու էլ եդ չի եկավ, հմա նա մախսուզ քար դառած կլի։
Արաբուզանգու սիրտը ժլունգ էլավ։
— Նա՛նի ջան,— ասավ,— բա քարացածին սըղացնելու հնարը չի կա։
— Խի՛ չի կա,— ասավ,— ո՛րդի ջան, թե որ քարացածի ջամսաթը իր բոյովը մին ըմանում դնեն ու միջին էնըրդամ լաց ըլին, որ ըրտասունքը գլխիցը հետ կաղնի, նա էլեդ կըսաղանա։
Արաբուզանգին պռավին շնորհակալութին արավ ու նրա շանց տված ճամփեն բռնեց, գնաց։
Գնաց, գնաց չքելը մի քար դառած օքմին ռաստ էկավ։ Չորսի կռանը մտիկ արավ, տեհավ որ իր իգիթ նշանածի երկաթե թոփուզը կողքին վերընգած ա. ընդուց ճնանչեց, որ քարացածը Ղասաբ-օղլին ա։
Սիրտը լաբոլ էրվեց, լաբոլ դարդ արավ ու լաց էլավ, հըմա Ղասաբ-օղլին քար էր կտրել՝ իմաներ ոչ։ Արաբուզանգին վիկալավ Ղասաբ-օղլու քարացած ջամսաթը մի ուսին դրուց, թոփուզն էլ մեկել ուսին ու տուն հասցրուց։ Ըժու Ղասաբ-օղլու բոյովը մին մի խորը աման ճարեց ու նրա քարացած ջամսաթը մեջը դրուց։ Արաբուզանգին, թըգավորի տղեն ու մին էլ Դունյա-գյոզալը ամանի բոլորիշուռը շարոտվեցին ու կցեցին մեջը լաց ըլիլ։ Լաց էլան ու լաց էլան, հա՛ լաց էլան ու լաց էլան, բերաննին ըռանց մնանա դնելու։
Թըգավորը Ղասաբ-օղլու քար դառնալը որ իմացավ հա՛, ղոշուն հըվաքեց, որ տղին սպանիլ տա ու իրա սըրտինը կըտարի՝ Դունյա-գյոզալին իր կնիկը շինի։
Էքսի օրը ըռավոդեց էն վախտը, որ մի օր ու քշերում էնըրդար լաց ին էլել, որ Ղասաբօղլու ծնգներիցը հետ ըրտասունքը բըցրացել էր ու էնդար տեղը սըղացրել, մին էլ էն տեհան, որ թըգավորը ղոշունը չքել տասը հըզար մարդ դուռը պատեց։
Ջանըմսա՛ն Արաբուզանգի, նրանց ասավ. «Դուք լաց էլեք» ու ինքը թոփուզը ձեռին փչեց ղոշունի աղաքն ու որ աջ ու ձախ հասցրուց հա՛, ոնց որ գերանդով խոտը վերտաս։ Մի՛ն, երկո՛ւ, իրե՛ք, մի խոսքով՝ մի սհաթումը էնդդա հալ ղոշունը սըլամաթ կտորեց ու եդ տուն մտավ։
Վրա երկու օրը էն ա հա Ղասաբ-օղլուն չքել գոտկատեղը սըղացրել ին, որ ղոշունը էլեդ դուռը պատեց։ Էս դոնուշվա ղոշունն էլ քսան հըզար մարդ էր։ Արաբուզանգին ասլանի պես դուս էկավ թոփուզը ձեռին, ընգավ ղոշունի մեջն ու մի շնչումը բիրադի ջարդեց։ Ըժու եդ տուն մտավ, իր լացի բանին կացավ։ Թըգավորը էս բանի վրա ջըլիզդան ըրմացավ։ Նա ի՛նչ խիալ կաներ, որ մի կնիկարմատ էդդդամ հալ ղոշունին կջարդեր։ Վրա իրեք օրն էլ երկու էնդդամ ղոշուն հըվաքեց, որ մթա թե Արաբուզանգուն ջըլիզ փարչափարա անեն։ Նա հենց գիդեր, թե Ղասաբ-օղլին էնա՝ ինչ քար դառավ պրծավ, էնա Արաբուզանգուն ու իր տղին էլ սպանիլ կտա ու ըրմաղան Դունյագյոզալին իր կնիկը կշինի։
Մախլասի, գլուխներըդ ի՞նչ ցըվացնեմ, ոնց որ ասի, վրա իրեք օրը թըգավորի քառսուն հըզար ղոշունը թազադան պատեց դուռը։ Հըմա Ղասաբ-օղլուն քիչ ա մնացել որ սղացնեն, ըրտասունքը հասել ա մչվանց ճակատը։ Իլլաջ չկար, Արաբուզանգին կիսատ թողուց ու թոփուզը ձեռին դուս էլավ։
Դուս էլավ ի՛նչ տեհավ, որ սաղ աշխարքը ղոշունը պատել ա. թոփուզը պտըտեց ու մեջ խաղաց. մի՛ն դես, մի՛ն դեն՝ մի սրումը մի քանի հըզարին շուռ տվուց։ Հըմա էս դոնուշ ղոշունը շատ էր կըտաղած կռիվ անըմ։

Արաբուզանգին էլ դե իրեք օր բերանը մընանա չառած՝ քշեր-ցերեկ համ ըրտասունք չափեր, համ էլ ղոշունի կռիվ տեր։ Ընենց որ խեղճը կամաց-կամաց հրաքաթից ընգավ ու մին էլ ջիլիզդան թիլացավ ու վեր ընգավ։ Կըտաղած ղոշունին էլ էդ էր պետքը. ղարսու-չորսու վրա թափեցին ու էն ա հա՜ ծվիկ-ծվիկ ին անըմ, որ մի բիրդան Ղասաբ-օղլին բուլըլմիշ էլավ։ Արաբուզանգին չքել դռանը կռիվ էր տալի, Դունյա-գյոզալն ու թըգավորի տղեն էնդդամ լաց էլան, որ ըրտասունքը գլխիցը հետ կաղնեց։ Ղասաբ-օղլին փռշտաց, սըղացավ։
— Պա՜, էս ինչ շատ քնել եմ։
Վախտը անցկեներ, խըտատացրին թե.— Հա՜յ աման, չուստ արա, վրա հասի, որ Արաբուզանգուն սպանեցին։
Ղասաբ-օղլին շշկլվածի պես դուս թռավ ու հլե ընդի վրա հասավ, որ ողջ ղոշունը կիտված էն ա հա՜ Արաբուզանգուն թիքա-թիքա են անըմ։ Աղաք վազեց, մի ձեռը դրուց Արաբուզանգու ըրեսին, հարայ-հրոց գձեց, մի ձեռով էլ թոփուզը վիկալավ ու մի երկու ո՜ր դես ու դեն պըտրտեց հա՜, ղոշունի աչքը վախեց, խելի եդ քաշվեց։ Իժու տեղիցը կաղնեց, թոփուզը շիդակեց դբա էս ղոշունն ու՝ ո՜ր չրըփպացներ ոչ՝ ամեն մի վրա բերելով հինգ հարիր մարդ շիլ ու քութ ըլեր։ Մի սհաթումը քսան հըզարին էլ սա ջարդ տվուց ու մնացողնին էլ դրա զոռը որ տեհան, ահ ու դողով փախս առան. ու մժա չիմ ցաք ու ցրիվ էլան։ Թըգավորի մատը մնաց բերնըմը։ Ըժու բռնեցին էս քու թըգավորին, մի խամ ղուլանի պոչից կապեցին ու բաց թողին։ Մաղյանը սաղ օրը էնդդամ քաշ տվուց, որ ոիգունը թըգավորի չոր կարկաժը թխթխկալեն պոչիցը կապած եդ բերուց։
Օխտն օր, օխտը քշեր թըգավորի տղի հըրսանիքն էր։ Նա Դունյա-գյոզալին հետ պսակվեց, Ղասաբօղլին՝ Արաբուզանգու։ Ինքն իր հոր թախտի վրա թըգավոր նստեց, Ղասաբ-օղլուն էլ նազիրվեզիր կարքեց։
Բարին ըստի, չարին՝ անօրենի ըշխարումը։ Ասծանե իրեք խնձոր վեր ընգավ. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ ալամ ըշխարքին։